



121. ՄՈՒՏԻԿ ԿՈՐՍԿԱՆԻ ՀԵՔԻՈՒԹԸ

Լըմ ա, շի լըմ, մի ֆորսկան ա լըմ, էդ ֆորսկանին ոնչ թը-
վանք ա ունենում, ո՛նչ էլ շուն: Մի օր էս ֆորսկանը ֆորս քյնա-
ցած ա լըմ, ճանփին իրեք թվանք ա քթնում, ասըմ ա.— Զա՛ն,
բանս լավ էլավ:

Թվանքնին վեր ա ունում, ահնում է, որ էրկուսը կոտրված
են, պանի պետքը շեն, մինն էլ շախմախ շունի: Էդ անշախմախ
թվանքը ուն ա քցում ու քյնում: Քյնում ա քյնում, իրեք գյուլի ա
ուստ կյալի, էրկուսը շիգ շոր են լըմ, մնըմ էլ իսկի ջուր շի լըմ:

Էն որ ինչ ջուր շի լըմ միջումը, տենում ա իրեք օրտակ կա,
էրկուսը սատկած ա լըմ, մինն էլ կիսաջան: Նշան ա տնըմ ու
թվանքը կրակ ա տալի, մին էլ տենում ա ըես կիսաջան օրտակը
վեր ընկավ: Քյնում ա վի ա ունենում ու էլետ ճանփա ընկնում:

Շատ ա քյնում, թե քիչ՝ ճանփին իրեք կյեղի ա ոստ կյալի,
էրկուսը շիգ խրաբա ա լըմ, մնումն էլ շենլիկ շի լըմ իսկի: Նի ա
մտնում էդ կյեղը՝ ինչ որ շենլիկ շի լըմ: Մի քանդված տուն ա մըա-
նում: Տենում ա ըես իրեք պուլիկ կա, էդ պուլիկներից էրկուսը շիգ
կոտրատած են լըմ, մինն էլ տակ շի ունենըմ: Էդ անտակը վեր ա
կալնում, օրտակը միջումն ա դնում, էփում ա: Օրտակը ուտում ա,
ճուրն էլ ածում ա շուխի մեջը, շլակում ու էլեդ ճանփա ընկնում:
Քյնում ա, քյնում՝ ճանփին մի դավի ա ոստ կյալի, էդ դավին

պոնում ա, լիալում ու կուզ ու կուզ վազ տալի: Տանում ա, տանում մի շհարումը դուրս ա կյալի, դավին էդ շհարմը ծախում ա ու նրա փողովը մի էշ ու էրկու կորեկ ա առնում: Կորեկնին խորշինն ա .ածում, իշի վրա քցում ու էլետ ճանփա ընկնում:

Շատ ա քյնում թե քիշ՝ մի կետի ա ոաստ կյալի: Տրեխնին հանըմ ա, թե կետը էն ղուը անց կենա, հակառակի ղայդի էշը թողում ա ու փախչում: Էդ մարդը տրեխնին ըտի հիլ ա անըմ ու ինքը իշի ետն ա վաղ տալի, քյնում պոնում, ետ ա պերում: Հենց էշի հետ դա ետ ա կյալի, տրեխնին կետը անց են կենում էն ղուը: Էդ մարդը մտիկ ա անըմ տենում, որ թե իրան տրեխնին մի լուծ եզն ա տառել ու էնտեղ շութ են վարում: Ինքն էլ մի հանքով անց ա կենում էն ղուը, եղնանց վարածըմ մի կորեկը ցանըմ ա, մինն էլետ իշի վրա քցում, ետ դառնում, պիրում տուն: Ետով տանում ա ճաղացր, օխտը օր, օխտը գիշեր էդ մի կորեկը աղըմ ա, աղըմ՝ չի պրծնում: Տենում ա, որ պրծնելու իլլաշ չկա, մնացածը ճղացպանին ա բախշում, ինքն էլ սելեր ա քրեհում, աղացած ալիրը պեռնում ա, պիրում տուն: Մի ամիս անցկացած չի լըմ կորկի ցանելուցը, մի օր էս մարդը մանգեղը վեր ա կալնում քյնում կորեկի արտը՝ մտիկ անի: Քյնում ա տենում՝ կորեկը լավ հասել ա, հընձելու վախտն ա: Մտիկ ա անըմ տենըմ, որ բես մի վիրի խող կորկի միջին պուն ա դրել, կորեկը ուտըմ, փչացնում ա:

Մանգեղը էս խողի ետնա որ վրա չի՝ անըմ, մանգեղը քյնում ա խողի կողքըն ա մտնում, խողը տհե մանգեղի ծերը փորըմը վազ ա տալի, արտը հնձում ա: Քանի խողը վազ ա տալի՝ մանգեղը արտը հնձըմ ա, էս մարդն էլ խողի ետնուց հնձածը վհաքում ա, վհաքում ա, վհաքում՝ պրծնում չի, իլլաշ չի լըմ: Վերջը արտի շատ փայը լհե-տհե հնձածը հիլ ա անըմ, վհաքածը սելեր ա քրեհում, պարցում, պիրում տուն, տան դաքին դիզան ա դնում ու սկսում կասել. կասում, կասում ա՝ չի հատնում:

Էլ ֆոր չի մնում, էլ ամբար, էլ ջվալ չի մնում, էլ ծակ չի մնում կորկով լցնում ա, կեսն էլ հընգեր-հընաններին փայ ա անըմ: Համա էլ լհե կասիլու շատ փայը կենում ա: Մի օր ոնց ա լըմ, էդ մնացած դիզանը կրակ ա ընկնում, չիմ էլ էրվում ա՝ էլ մարաք ու կյոմ, խոտ ու դարման չի մնում՝ չիմ էլ մոխիր ա դառնըմ: Եր որ կրակը հնդարտվում ա պրծնում, էդ մարդը քյնում ա մարաքը՝ տենում ա բեսի մոխրի միջին մի շուլ կա վեր ընկած, էդ շուլը վեր ա ունում, տենում ա, որ ինչ որ կլխովը անց չի՝ կացել՝ չիմ էլ սուտ ա էլել: